ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

14 մարտի 2011թ. թիվ 15 - Ա

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի1997թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետով,համաձայն Տավուշի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2011թ հիմնական միջոցառումների պլանի

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ ԵՄ

1.2011թ ապրիլի 14-ին Տավուշի մարզում անցկացնել շտաբային ուսումնավարժություն <<Բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացումը Այգեձորի ջրամբարի պատվարի փլուզման դեպքում>> թեմայով:

2.ՈՒսումնավարժությանը մասնակից դարձնել
1/ Տավուշի մարզպետարանին
2/Մարզային փրկարարական վարչությանը
3/ ՔՊ մարզային ծառայություններին
4/ Այգեձոր,Չինարի համայնքներին

ՈՒսումնավարժության պատշաճ մակարդակով նախապատրաստվելու և անցկացնելու նպատակով

3.Մարզային փրկարարական վարչության պետին՝
1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը
2/ Պատրաստ վիճակի բերել կառավարման կապի ևազդարարման համակարգերը

4.ՔՊ մարզային ծառայությունների պետերին՝10-օրյա ժամկետում

1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը
2/ Կազմակերպել ծառայությունների համալրումը անձնակազմով ,տեխնիկայով գույքով,անցկացնել պարապմունքներ

5. Այգեձոր,Չինարի համայնքների ղեկավարներին

1/ Ճշտել և լրամշակել գործող պլանային փաստաթղթերը,տարահանման հանձնաժողովների կազմերը
2/ Կազմակերպել պարապմունքներ համայնքների ազգաբնակչության շրջանում
3/ Տեղերում ստուգել և ճշտել փրկարարական ուժերի հագեցվածությունը անձնակազմով ,գույքով և տեխնիկայով

6.ՈՒսումնավարժությանը մասնակցող ՔՊ ուժերի հրամանատարությանը
1/Անցկացնել ուսումնամեթոդական պարապմունքներ անձնակազմերի մասնակցությամբ

7.ՈՒսումնավարժության ընթացքում գործնականորեն իրականացնել

1/Մարզի ՔՊ ղեկավար կազմի ազդարարում և հավաք
2/Մասնակցող համայնքների ղեկավար կազմի ազդարարում և հավաք

8.ՈՒսումնավարժության ղեկավար նշանակել Մարզային փրկարարական վարչության պետ փ/ծ գնդապետ Գ.Մատինյանին

9.Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

14 մարտի 2011թ.
ք.Իջևան